ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան
hasmik.xachatryan.79@mail.ru

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ամփոփում

Մարդու հոգևոր ներաշխարհին արտացոլվում է ոչ միայն նրա հասարակական գործունեությամբ, այլ նաև նրա խոսքի լեզվական վարքագծով: Մարդու խոսքը, բառապաշարը նրա մտավոր կարողության արտացոլանքն են և արտահայտում են նրա դաստիարակությունը, կրթությունը, մտավոր զարգացումը, բնավորության գծերը, հատկանիշները, բարոյականային որակները: Այսօր դպրոցահասակ աշակերտների, ուսանողների, նույնիսկ բուհն ավարտող շրջանավարտների առօրյա խոսքը մեծ մասամբ չի համապատասխանում գեղեցիկ խոսքի հատկանիշներին, և այդ բացը պետք է լրացվի դպրոցում՝ ընդգրկելով դպրոցի ողջ կոլեկտիվին: Կրթվածությունը՝ որպես գիտելիքների, հմտությունների և ընդունակությունների ամբողջություն, սովորողի հոգևոր և մտավոր անձնային որակների ձևավորման կարևոր միջոց է, և այն պետք է դառնա դպրոցական կրթության անկյունաքարը: Ուսուցչական անձնակազմի խնդիրն է ձևավորել անընդհատ ինքնաճանաչման և ինքնակատարելագործման ձգտող սաների: Նրանց պետք է կանգնեցնել մշտական ինքնավերլուծության, ինքնաշտկման և ինքնակատարելա-գործման ճանապարհին՝ ձևավորելով սկզբունքային, զգացմունքային և համամարդկային արժեքներով օժտված անհատներ: Աշակերտի հոգևոր հետաքրքրությունների զարգացմանը զուգընթաց, համամարդկային արժեքներին, հարուստ մշակույթին, արվեստի գործերին ծանոթանալուն զուգահեռ՝ ուսուցիչը պետք է զարգացնի նաև աշակերտի խոսքն ու հաղորդակցական կարողությունը, քանի որ անհատի բարոյական զարգացումը սերտորեն կապված է ժողովրդի հոգևոր արժեքների՝ լեզվի, գրականության, պատմության, մշակույթի յուրացման հետ:

Խոսքի զարգացածության աստիճանը ինտելեկտուալ մակարդակի ցուցանիշ է, ցուցանիշ, թե ինչպես է մարդն ընկալում, հասկանում և վերլուծում արտաքին աշխարհից ստացած տեղեկատվությունը և հարմարվում դրան:

Բանալի բառեր և արտահայտություններ. մտավոր զարգացում, բազմակողմանի ուսուցում, անհատի բարոյական զարգացում, բարեկիրթ հաղորդակցություն, խոսքի բովանդակայնություն, հոգևոր մշակույթ:

Ներածություն

Անձի խոսքային գործունեությունը բխում է նրա բարոյական և գեղագիտական համոզմունքներից և վարքագծից: Հին հույն գիտնական Սոկրատեսն ասում էր. «Խոսիր, որպեսզի ես ճանաչեմ քեզ»: Եթե աչքերը հոգու հայելին են, ապա խոսքը մարդու հոգևոր մշակույթի արտահայտությունն է, նրա կրթվածության և մտավոր զարգացման խոսուն չափանիշը: Անցյալի փիլիսոփաներն ու պերճախոսները համոզված էին, որ ճշմարիտ պերճախոսությունը սերտորեն կապված է բանախոսի բարոյական բարձր մակարդակի հետ: Մարդու խոսելու ոճը, բառապաշարը արտահայտում են նրա մտավոր կարողությունն ու զարգացումը, դաստիարակությունը, կրթությունը, բնավորության գծերն ու հատկանիշները: Հաճախ մարդկանց վրա ավելի շատ ազդեցություն ենք թողնում ոչ թե ասելիքով, այլ խոսելաձևով, քանի որ մեզ լսողները գրեթե նույն մտքերն ունեն, պարզապես արտահայտման ձևն ու ոճն է տարբեր: Խոսքի ոճը մեզնից յուրաքանչյուրին հատուկ խոսելաձևն է մեր մտքերն ու զգացմունքներն արտահայտելու ժամանակ: Գերմանացի լեզվաբան Ֆ. Գաբելենցը գրում է, որ մարդու լեզուն ոչ միայն ինչ-որ բան է արտահայտում, այլև ներկայացնում է հենց մարդուն[1]: Իսկ ամերիկացի լեզվաբան և փիիսոփա Բ. Ուորֆը վստահ էր, որ «այս կամ այն իրավիճակում մարդիկ իրենց պահում են այնպես, ինչպես դրա մասին խոսում են: ... Բառերի գործածման նորմերը, լեզվական սովորույթները որոշում են մարդկանց վարքագիծը» [2]: «Մեր մասին ամեն օր դատում են մեր խոսքով: Մեր խոսքերը ցույց են տալիս մեր կրթվածությունը. խորաթափանց ունկնդրին դրանք բացահայտում են հասարակության այն խավը, որին մենք պատկանում ենք, և ցույց են տալիս մեր կրթության և կրթվածության մակարդակը»[3]: Սուրբ գիրքն ասում է. «Բարի մարդը իր սրտին բարի գանձէն բարութիւն կը բղխեցնէ եւ չար մարդը իր սրտին չար գանձէն չարութիւն կը բղխեցնէ. վասն զի բերանը սրտին աւելցուքէն կը խօսի»[4]:

Այսօր դպրոցահասակ բոլոր աշակերտների, ուսանողների, նույնիսկ բուհի շրջանավարտների առօրյա խոսքը մեծ մասամբ չի համապատասխանում գեղեցիկ խոսքի չափանիշներին: Դրա հիմնարար պատճառներից մեկն էլ ընտանիքն է, քանի որ ընտանիքում բավարար

---

[1] Блинов И. Я., Выразительное чтение и культура устной речи, Москва, 1946, 200 стр. :

[2] Worf B. L., Language, Thought and Reality, p. 148:

[3] Քառնեգի Դ., Ինչպես ազդել մարդկանց վրա խոսքի միջոցով, Ա. Աղաբեկյանի թարգմանությամբ, Երևան, «Գիտանք», 2018, էջ 88:

[4] Նոր կտակարան, Ղուկասու 6 : 45, էջ 87:

ուշադրություն չի դարձվում բարեկիրթ խոսքային հաղորդակցությանը: Այդ բացը լրացվում է դպրոցում, և ցանկալի արդյունքի կարելի է հասնել միայն հետևողական և համառ աշխատանքների շնորհիվ՝ ընդգրկելով դպրոցի աշխատակազմին: Վ.Ա. Սուխոմլինսկին իր «Սիրտը նվիրում եմ երեխաներին» գրքում գրում է, որ մարդու խոսքի մշակույթը նրա հոգևոր մշակույթի հայելին է[5]: Կրթվածությունը՝ որպես գիտելիքների, հմտությունների և ընդունակությունների ամբողջություն, սովորողի հոգևոր և մտավոր անձնային որակների ձևավորման կարևոր միջոց է, հետևաբար այն պետք է դառնա դպրոցական կրթության անկյունաքարը: «Ուսուցման բովանդակությունը ներառում է ոչ միայն ուսումնառողների գիտելիքներն ու կարողությունները, այլև նրանց ամբողջական փորձը, գաղափարների ծնունդը, հոգեֆիզիկական վիճակների կառավարումը, գործողությունների ռեֆլեքսիան, նոր փորձի ստացման եղանակները, հաղորդակցման գործընթացը և դրա ռեֆլեքսիան»[6]:

Մեթոդաբանությունը

Աշխատանքում կիրառել ենք քննական, վերլուծական, համեմատական, համադրական մեթոդներ:

***

Դպրոցը պետք է դառնա այն «լաբորատորիան», որտեղ առարկաների ուսումնասիրման ընթացքում «ձևավորվում է» երեխայի գիտակցությունը, ձևավորում է երեխան՝ որպես անձ, անհատ, հասարակության անդամ: Անձի ձևավորման աշխատանքները, ինչպես նաև աշակերտների հետ հաղորդակցումը պետք է լինեն անհատական: Այդ նպատակով այն կարելի է կազմակերպել տարբեր կերպ՝ էլեկտրոնային եղանակով, գրավոր կամ արտադասարանային աշխատանքների ժամանակ: Ուսումնասիրելով աշակերտների խոսքը՝ ուսուցիչը պետք է իմանա, թե որ աշակերտներն ունեն վատ բառապաշար, գռեհիկ խոսվածք, որ հարիր չէ հանրության մեջ ներկայանալի լինելուն, և ժամանակին աշխատանքներ իրականացնի այդ ուղղությամբ: Այդ նպատակով խրախուսելի են աշակերտների ընդհանուր մշակույթի բարձրացումը, բարձր արժեհամակարգի ձևավորումը: Պետք է աշակերտին բացատրել, որ մարդու միտքը կարգավորում է նրա վարքն ու գործելակերպը, իսկ մարդու միտքը պետք է լինի պայծառ, մաքուր, ինչպես իր գործերը: Կարևոր է նաև, որ սովորողների մեջ ձևավորվեն

[5] https://pianoforte-mag.ru/hy/citaty-iz-knigi-serdce-otdayu-detyam-citaty-iz-knigi-serdce-otdayu-detyam/:

[6] Պետրոսյան Հ. Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2012, էջ 21-22:

բարեվարքության, հարգալից վերաբերմունքի և ճիշտ դիմելաձևի հմտություններ, որոնք իսկապես կարտահայտեն բարեկամեցողություն մարդկանց և ընդհանրապես ցանկացած առարկայի կամ երևույթի նկատմամբ: Աշակերտներին պետք է սովորեցնել աշխարհն ընկալել ավելի դրական, ավելի բարի, ավելի հանդուրժողական երանգներով, որ կյանքին նայեն լուսավոր հայացքով, որովհետև դրական տրամադրվելով մարդկանց և ընդհանրապես արտաքին աշխարհի նկատմամբ՝ առաջին հերթին հենց անհատի կյանքն է դառնում դյուրին ու հանգիստ: Զրույցի մեթոդով պետք է աշակերտներին բացատրել, որ կյանքում լինում են պահեր, դեմքեր, դեպքեր, որոնք այս կամ այն կերպ ազդում են մարդու հոգևոր աշխարհի վրա, փորձում կոտրել կամ, ընդհակառակը, ոգևորում են մարդուն: Առողջ կիրթ ու գրագետ մարդու առավելությունն այն է, որ ցանկացած պարագայում կարողանում է ճիշտ որոշում ընդունել, հաղթահարել ամեն ինչը գիտակցորեն՝ դժվարությունները դարձնելով պատվանդան վերև բարձրանալու, իսկ հաջողությունները դարձնելով խթան ավելի առաջ գնալու: Մեր սաները պետք է գիտակցեն, որ կյանքում հանդիպած հաջողությունները պետք է դառնան բարու ու գեղեցիկի արարման մի նոր դրդապատճառ, իսկ դժվարությունները չպետք է խաթարեն մարդկային բնույթը, այլ մարդը գիտակցորեն, որպես բանական և բարոյական էակ, պետք է հետևություններ անի, կշռադատի և շարունակի «ծաղկեցնել իր ներսի փոքրիկ այգին», ավելի զտի ու գեղեցկացնի իր հոգին՝ հասարակության մեջ դառնալով լավի, բարության ու մարդկային կերպարի վառ օրինակ, ընդգծելով կիրթ ու գրագետ մարդու առավելությունն ու արժեքը:

Դպրոցում պետք է ձևավորենք անընդհատ ինքնաճանաչման և ինքնակատարելագործման ձգտող սաների, որոնք պետք է ունենան սկզբունքայնություն, զգացմունքայնություն և համամարդկային արժեքներ: Աշակերտին պետք է բացատրել, որ երբ մարդն առաջնորդվում է բանականությամբ, հաշվենկատ է, զգացմունքով՝ ազնիվ, իսկ երբ կարողանում է համադրել այս երկուսը, ամեն ինչ դառնում է ներդաշնակ: Կարևոր է նաև աշակերտների երազանքներին ուշադրություն դարձնելը, որովհետև դրանք ևս արտացոլում են մարդու էությունը, խառնվածքը:

Ինչ խոսք, այս բարդ գործընթացում ուսուցչի աշխատանքը դժվար և ժամանակատար կլինի, բայց յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի, որ իր կոչումն է դաստիարակել արժանավոր սերունդ՝ համամարդկային վեհ գաղափարներով, որոնք կօգնեն իրենց սաներին կյանքի արագ զարգացման գործընթացում քայլ առ քայլ բարձրանալու, ինքնահաստավելու, նոր գաղափարներ ու մտքեր առաջադրելու գործում: Իհարկե, ուսուցիչն ինքն էլ պետք է ունենա այդ բոլոր հատկանիշները, որովհետև եթե նա չունենա մի

բան, այն չի կարող փոխանցել իր սաներին (օրինակ՝ սեր, հարգանք, արժանապատվություն, լրջախոհություն, բարեկրթություն և այլն): Հաջողության բանալին տալիս է ուսուցիչը, և նրա նկատմամբ հավատն է դառնում ուղենիշ սաների համար, որպեսզի միասին առաջ գնան՝ հաջողության հանդեպ հավատի հույսով: Չինական առածն ասում է, որ ուսուցիչները միայն դռներն են բացում, հետո սաներն իրենք պետք է առաջ գնան: Այս առումով՝ «կարևոր է ընդլայնել ուսուցիչների աշխարհայացքը, վերացնել մտքի ցանկացած սահմանափակում, ինչը վերջիններիս կկանգնեցնի սեփական աշխատանքին ավելի բազմակողմանիորեն մոտենալու իրողության ճանապարհին, թույլ կտա խորությամբ պատկերացնել գիտելիքների ձեռքբերման գործընթացը, կիրառել համապատասխան մեթոդաբանություն…»[7]:

Մարդու հոգևոր ներաշխարհին արտացոլվում է ոչ միայն նրա հասարակական գործունեությամբ, այլև նրա խոսքի լեզվական վարքագծով, քանի որ նրա հոգևոր հետաքրքրությունների զարգացմանը զուգընթաց, գեղեցիկի, բարու, և, ընդհանրապես, մարդկության բարոյական արժեքներին, հարուստ մշակույթին, արվեստի գործերին ծանոթանալիս զարգանում է նաև մարդու խոսքն ու հաղորդակցական կարողությունը: Անհատի բարոյական զարգացումը սերտորեն կապված է ժողովրդի հոգևոր արժեքների՝ լեզվի, գրականության, պատմության, մշակույթի յուրացման հետ: Հետևաբար աշակերտներին խոսքի մշակույթին կարող ենք ծանոթացնել տաղանդավոր գրողների գրքերի միջոցով, որոնց հեղինակները փայլուն տիրապետում են մեր գրական լեզվի բոլոր նրբություններին: Անձի բառարանային և մտավոր հարստությունը նրա՝ կյանքի, գիտության, գրականության վերաբերյալ ունեցած խոր ու բազմակողմանի գիտելիքների յուրացման արդյունք է: Բազմակողմանի զարգացած լինելը հարստացնում է լեզուն՝ այն դարձնելով ճկուն, բազմերանգ, արտահայտիչ, հետաքրքիր ու ախորժելի, ինչը չի կարելի ասել սահմանափակ կարողություն ունեցող անձանց լեզվի ու ոճի մասին: Ուսումնառության ընթացքում կատարվում է անհատի վարքի աստիճանական փոփոխություն. ուսումնառության որակի ապահովումն ու գիտելիքների ծավալը էապես պայմանավորված են անձի հետաքրքրություններով և ուսումնական դրդապատճառներով: Այն անհատական է՝ կապված ուսումնական տարբեր փուլերի, ուսումնական միջավայրի, ինչպես նաև տարբեր դրդապատճառների հետ՝ նայած, թե ինչ

[7] Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Գործիմաց մոտեցում, տեսություն և պրակտիկա, Այռեքս, Ե., 2004, էջ 8-9:

պահանջմունքներ և հոգեկան առանձնահատկություններ ունի անձը: Դասագրքերի բնագրերն ուսումնասիրելիս ուսուցիչն աշակերտներին պետք է կանգնեցնի մշտական ինքնավերլուծության, մշտական ինքնաշտկման և ինքնակատարելագործման ճանապարհին: Այս առումով հիշարժան է Մակեդոնացու այն խոսքը, թե իր հայր Փիլիպոսին է պարտական, որ ապրում է, իսկ իր ուսուցիչ Արիստոտելին, որ ապրում է արժանապատվությամբ[8]: Ուսուցչի խնդիրն է ուսումնասիրել, թե առաջադիր թեմայի վերաբերյալ աշակերտն ի՛նչ մոտեցում ու կարծիք ունի, ի՛նչ է մտածում կամ զգում, և ուսուցումն ուղղորդի համապատասխան ուղղությամբ: Նրա կարևոր հանձնառություններից մեկը աշակերտների մեջ ամենալավը զարգացնելու ունակությունն է, սաների կողմից արժանապատվության ճանաչումը, իր արժեքի գիտակցումը:

Անձի պահանջմունքների աստիճանակարգությունը ներկայացնենք ըստ Մասլոուի բուրգի.

Գծապատկեր 1

Հասկանալի է, որ մինչև չբավարարվի նախորդ մակարդակը, մարդը չի ձգտի պահանջմունքների ավելի բարձր մակարդակի բավարարմանը, քանի որ կենսական կարևոր պահանջների բացակայության պարագայում մարդը չի կարող մտածել ճանաչման կամ ինքնադրսևորման մասին:

[8] Պլուտարքոս, Զուգահեռ կենսագրություններ, Ե., 1987, էջ 51:

Աշակերտների խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքների հիմնական նպատակը անհատականության ձևավորումն է, խոսքի ազդեցությունը նրա ներաշխարհի վրա, աշակերտի մտքի և հոգու կրթությունը՝ օգնելով, որ նա կարողանա հստակ և արտահայտիչ հաղորդակցվել, արտահայտել իր տեսակետն ու փորձը, քանի որ հենց մարդու խոսքային գործունեությամբ է դրսևորվում նրա ընդհանուր մշակույթը, նրա անհատական հոգևոր հարստությունը: Աշակերտներին պետք է բացատրել, թե ինչ օգտակար կենսական արդյունքների կարելի է հասնել՝ զարգացնելով իրենց խոսքը առաջին հերթին բոլոր առարկաների դասընթացների ուսուցման ժամանակ՝ ներկայացնելով հանձնարարված նյութը, քանի որ սեփական մտքերը իմացածի վերաբերյալ հստակ, վառ արտահայտելու կարողությունը ձևավորում է ինքնավստահություն, թույլ տալիս մարդուն հավասար զգալու հավասարների մեջ: Կրթության հիմքում դրվում է երեխայի սոցիալականացման խնդիրը՝ կարևորելով ոչ թե ինչքա՛ն և ինչպե՛ս է սովորել սանը, այլ թե ստացած կրթության հիման վրա ինչպես է նա կարողանում տեղ գտնել հասարակության մեջ: «Անհատը ոչ միայն յուրացնում է արտաքին աշխարհից եկող արժեքները, այլև դրսևորվում է իբրև անհատականություն, որն ի վիճակի է գիտակցել և ձևավորել սեփական արժեքները, համեմատության մեջ դնել դրանք և արժևորել, ապա կանխագծել ապագան»[9]: Բանավոր խոսքի զարգացման աշխատանքների կրթական արժեքը բավականին մեծ է, քանի որ այդ գործընթացում ձևավորում ենք աշակերտների աշխարհայացքը, գաղափարական դիրքորոշումը, իր տեսակետը պաշտպանելու ունակությունը, հաղորդակցական մշակույթի զարգացումը, բարոյական արժեքները: «Փաստերի իմացությունն ինքնին համեմատաբար ավելի ցածր արժեք ունի, քանի դեռ աշակերտները չունեն համադրելու, վերլուծելու, ինտեգրելու կամ կառուցելու հմտություններ, որոց միջոցով գիտելիքը դառնում է օգտակար և գործնականում կիրառելի: … Խոսքը (լեզուն) և մտածողությունը գտնվում են անմիջական կապի մեջ: Կաշկանդված խոսքի արդյունք է կաշկանդված, սահմանափակ միտքը»[10]: Բանավոր խոսքի զարգացումն օգնում է ամրապնդել հիշողությունը, զարգացնում տրամաբանական մտածողությունը, երկխոսություն և մենախոսություն կառուցելու հմտությունը, ակտիվացնում է աշակերտների խոսքային գործունեությունը: Կիրթ ու գրագետ խոսքի տիրապետումը հնարավորություն է տալիս

[9] Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Գործիմաց մոտեցում, տեսություն և պրակտիկա, Այռեքս, Ե., 2004, էջ 24:
[10] Նույն տեղում, էջ 86:

աշակերտներին հետագայում մարդկային ճիշտ հարաբերությունների կառուցման և հաղորդակցական կարողությունների ձևավորման շնորհիվ ունենալ իր տեղն ու դերը հասարակության մեջ, դառնալ հասարակական կյանքի գործուն մասնակից: Իսկ մարդկային էության ամենախոր ցանկությունը հասարակության մեջ նշանակալից և գնահատված լինելու ցանկությունն է. դրա համար նա պետք է ունենա հաղորդակցման բավարար մշակույթ, քանի որ դրանով է պայմանավորված նրա վարքագիծը, վերաբերմունքը, հասարակության մեջ իր կեցության ձևը: Ընդհանուր մշակույթը դպրոցում տրված գիտելիքների հանրագումարը չէ միայն, այն իր մեջ ներառում է նաև անձի հոգևոր արժեքների ամբողջությունը, արժեքային կողմնորոշումներն ու պահանջները, այսինքն՝ անձի մեջ ձևավորված բարոյականային որակները: Այն «պայմանավորված է կրթության բովանդակությամբ, գիտելիքների յուրացման ձևերով, ուղիներով և ընդհանրապես սովորելու ցանկությամբ: Մարդու կուլտուրան նրա ներաշխարհի և արտաքին գործունեության ներդաշնակությունն է»[11]: Սոկրատեսն ասում էր. «Նվիրիր ինձ գեղեցկությունը ներքին հոգու մեջ, որ մարդու արտաքինն ու ներքինը մեկ լինեն»[12]:

Ասելիքի ձևակերպման միջոցով հնարավոր է ստանալ դրական կամ բացասական արձագանք: Օրինակ՝ արևելյան մի պատմվածքում գուշակը, որին տիրակալը կանչել էր կանխագուշակելու իր և իր հարազատների մահվան ժամանակը, հայտնում է, որ տիրակալը իր ազգականներից շուտ կմեռնի, և տեսնելով իր խոսքերից առաջացած զայրույթը՝ անմիջապես «ուղղում» է իրեն՝ ասելով. «Ես ուզում էի ասել, որ քո ազգականները քեզանից ավելի շատ կապրեն»: Այսպիսով՝ գուշակը մեղմում է տիրակալի զայրույթը խոսքի դրական համաձայնության հնարքով:

Լեզվական նորմերի տիրապետումը, բառի տեղին և դիպուկ կիրառումը, տեքստ կառուցելու կարողությունը, արտասանությունը, ճիշտ շեշտադրումը, ինչպես նաև հաղորդակցման տարբեր իրադրություններում լեզվի արտահայտչական միջոցների տեղին օգտագործման կարողությունը հենց խոսքի մշակույթն է, որպեսզի խոսքը համապատասխանի ասելիքի նպատակին և բովանդակությանը, իսկ դրա համար մեր լեզուն ունի բոլոր հնարավորությունները՝ քերականական կուռ համակարգ, հարուստ բառապաշար, պատկերավորման, խոսքի արտահայտչականության անսպառ ձևեր ու միջոցներ: Պետք է հասնել նրան, որ երեխան կարողանա իր մտքերը շարադրել արտահայտիչ և հստակ՝ պահպանելով

[11] Նույն տեղում, էջ 40:

[12] https://hy.warbletoncouncil.org/frases-de-socrates-7507:

քերականության, բառապաշարի, արտասանության, դիմախաղի բոլոր կանոնները, խոսքի էթիկան, ձայնի ճիշտ տոնայնությունը. մարդու խոսքը պետք է լինի հանգիստ, հարգալից: Իհարկե, պետք է կարևորել նաև լսելու ունակության ձևավորումը, քանի որ հաղորդակցության բարձր մշակույթի մասին է վկայում նաև զրուցակցին լսելու կարողությունը. «Լռել չկարողացողը լսել չի կարողանում»[13]:

Եզրակացություն

Մայրենի լեզվի յուրաքանչյուր դաս ուսումնական նյութի իրականացման գործընթաց չէ միայն, այն անընդհատ փնտրտուք է՝ գտնելու նոր ուղիներ և եղանակներ աշակերտների խոսքի և ընդհանուր հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացման համար: Բանավոր խոսքը՝ որպես լեզվական կարողության դրսևորում, վկայում է անհատի մտավոր ունակությունների մասին և պայմանավորված այն հանգամանքով, թե խոսքը որքանով է արտահայտիչ և համոզիչ՝ կարելի է դատել խոսքի հեղինակի մտավոր կարողությունների մասին: Խոսքի զարգացածության աստիճանը ինտելեկտուալ մակարդակի ցուցանիշ է, ցուցանիշ, թե ինչպես է մարդն ընկալում, հասկանում և վերլուծում արտաքին աշխարհից ստացած տեղեկատվությունը և հարմարվում դրան: Ինտելեկտը՝ որպես գիտելիքի որոշակի քվանտ, իրացնում է իրեն, արտաքին վերլուծության համար դառնում հասանելի բառային տեսք ստանալուց հետո: Խոսքի արվեստին տիրապետող մարդն ավելի է ընդունվում և արժևորվում հասարակության կողմից: Խոսքը մարդու հաղորդակցման ամենանուրբ և ամենահզոր միջոցն է, այն պետք է նրան ամեն քայլափոխի, ամեն պարագայում՝ մտքեր արտահայտելու, մարդկանց հետ շփվելու ժամանակ: Մարդու խոսքում արտացոլվում է նրա մշակույթը, դաստիարակությունը. նրա մասին ձևավորվում է ընդհանուր կարծիք:

Асмик Хачатрян

Педагогические основы развития устной речи

Резюме

Ключевые слова и выражения: интеллектуальное развитие, разностороннее обучение, нравственное развитие личности, вежливое общение, содержание речи, духовная культура.

[13] Պլուտարքոս, Զուգահեռ կենսագրություններ, 1987, էջ 522:

Духовный внутренний мир человека отражается не только в его социальной деятельности, но и в языковом поведении его речи. Речь и словарный запас человека являются отражением его умственных способностей и выражают его воспитание, образование, интеллектуальное развитие, черты характера, особенности, нравственные качества. Сегодня повседневная речь школьников, студентов, даже выпускников вузов в большинстве своем не отвечает характеристикам красивой речи, и этот пробел необходимо восполнять в школе, в том числе и всем коллективом школы. Образование как совокупность знаний, навыков и умений является важным средством формирования духовных и интеллектуальных качеств личности обучающегося и должно стать краеугольным камнем школьного образования. Задача педагогического коллектива состоит в том, чтобы сформировать студентов, постоянно стремящихся к самопознанию и самосовершенствованию, их следует поставить на путь постоянного самоанализа, самокоррекции и самосовершенствования, формирования личности, наделенной принципиальными, эмоциональные и общечеловеческие ценности. Наряду с развитием духовных интересов учащегося, наряду с ознакомлением с общечеловеческими ценностями, богатой культурой, произведениями искусства, педагог должен развивать и речевые и коммуникативные способности учащегося, ведь нравственное развитие личности тесно связано с приобретением духовных ценностей народа: язык, литература, история, культура.

Степень развития речи является показателем интеллектуального уровня, показателем того, насколько человек воспринимает, понимает и анализирует информацию, полученную из внешнего мира, и адаптируется к ней.

Hasmik Khachatryan

Pedagogical basic development of oral language

Conclusion

Key words and expressions: intellectual development, multifaceted learning, moral development of an individual, polite communication, content of speech, spiritual culture

A person's spiritual inner world is reflected not only by his social activity, but also by the linguistic behavior of his speech. A person's speech and vocabulary are a reflection of his mental capacity and express his upbringing, education, intellectual development, character traits, characteristics, moral qualities. Today, the daily speech of school-aged pupils, students, even university graduates mostly does not meet the characteristics of beautiful speech, and this gap must be filled in

the school, including the entire school staff. Being educated, as a set of knowledge, skills and abilities, is an important means of forming the spiritual and intellectual personal qualities of the learner, and it should become the cornerstone of school education. The task of the teaching staff is to form students who are constantly striving for self-knowledge and self-improvement, they should be put on the path of constant self-analysis, self-correction and self-improvement, forming individuals endowed with principled, emotional and universal values. Along with the development of the student's spiritual interests, getting acquainted with universal values, rich culture, works of art, the teacher should also develop the student's speech and communication ability, because the moral development of the individual is closely related to the acquisition of the spiritual values of the people: language, literature, history, culture.

The degree of speech development is an indicator of intellectual level, an indicator of how a person perceives, understands and analyzes the information received from the outside world and adapts to it.

Գրականություն

1. Նոր կտակարան, Ղուկասու 6 : 45:
2. Նոր մոտեցումներ ուսուցիչների պատրաստման գործընթացին, Գործիմաց մոտեցում, տեսություն և պրակտիկա, Այռեքս, Երևան, 2004, էջ 8-9, 198 էջ:
3. Պետրոսյան Հ. Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012, 564 էջ:
4. Պլուտարքոս, Զուգահեռ կենսագրություններ, Երևան, 1987, 794 էջ:
5. Քառնեգի Դ., Ինչպես ազդել մարդկանց վրա խոսքի միջոցով, Ա. Աղաբեկյանի թարգմանությամբ, Երևան, «Գիտանք», 2018, 88 էջ:
6. Блинов И. Я., Выразительное чтение и культура устной речи, Москва, 1946, 200 стр.
7. Worf B. L., Language, Thought and Reality, Technology Press of Massachusetts Institute of Technology in [Cambridge].,1955, 278p.

Խմբագրություն է ուղարկվել 16.08.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 30.08.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.